ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» հունիսի 2014**թ.** **N------ -Ա**

ՈՐՈՇՈՒՄ

«ԵՐԹԱՇԱՐԺ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածով և 67-րդ հոդվածի 1-ին կետի գ) ենթակետով և հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի մարտի 15-ի N193-Ն որոշումը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարել «Երթաշարժ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն)։

2. Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում ստեղծել լուծարման հանձնաժողով։

3. Լուծարման հանձնաժողովին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում ավարտել Ընկերության լուծարման գործընթացը և 20-օրյա ժամկետում լուծարումից հետո մնացած գույքը հանձնել «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի հաշվեկշիռ։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ -ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԹԱՇԱՐԺ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երթաշարժ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2003 թվականից մինչև 2012 թվականը զբաղվել է Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի տարածքում ավտոկայանատեղերի կազմակերպման և սպասարկման աշխատանքներով, ինչպես նաև տրանսպորտային ծառայություններ է մատուցել Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի տարբեր կազմակերպություններին:

2014 թվականին Ընկերության կողմից ավտոկայանատեղերի կազմակերպման և սպասարկման աշխատանքներ այլևս չեն իրականացվում՝ պայմանավորված Երևան քաղաքի ավագանու 2012թ. դեկտեմբերի 25-ի «Երևանի քաղաքային համայնքում ավտոկայանատեղեր կազմակերպելու մասին» N561-Ն որոշմամբ: Ընթացիկ տարվա համար Ընկերությունը կնքել է 2 պայմանագիր՝ տրանսպորտային ծառայությունների մատուցման գծով ընդամենը 3.0 մլն. դրամի, որն ամբողջությամբ ուղղվում է ծախսերի կատարմանը՝ աշխատավարձի գծով 2.3 մլն. դրամ (3 միավոր՝ տնօրեն, հաշվապահ, վարորդ), հարկային պարտավորությունների գծով 0.5 մլն. դրամ և 0.2 մլն. դրամ վառելիքի գծով: Տվյալ պարագայում ընկերությունը առևտրային կազմակերպության հիմնական նպատակը՝ շահույթի հետապնդում (ստացում), ըստ էությամբ չի ապահովում:

Հաշվի առնելով վերոնշվածը, նպատակահարմար է վարչական շրջանի կարիքների համար տրանսպորտային ծառայությունների գնման գործընթացն իրականացնել պայմանագրային հիմունքներով մասնագիտացված կազմակերպությունների («Երևանի ավտոբուս», «Երևանտրանս» ՓԲԸ-ներ) միջոցով, ինչը հնարավորություն կտա կրճատել ծախսերը:

Ելնելով վերոգրյալից, ներկայացվում է «Երթաշարժ» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԹԱՇԱՐԺ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երթաշարժ» փակ բաժնետիրական կազմակերպությունը լուծարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չկա։

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԹԱՇԱՐԺ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երթաշարժ» փակ բաժնետիրական կազմակերպությունը լուծարելու մասին» քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ